

կը պատկերացնէր առաքելոց ոտքերուն լուացումը»:

Վերնատան հարաւ-արեւելքի ստորին մատուռը բաժնուած էր երկու մասերու, համաձայն կրկնակ յիշատակին զոր կը նուիրագործէր Ռոնալուան կամ Nipterը, կողակին մէջ պատկերազարդուած. Յիսուսի Երևումը Թովմասի՝ նոյնպէս պատկերագրուած աջ-կողմը, այն ոճով որ տակաւին կարելի է նշմարել Բեթղեհէմի եկեղեցիին խաչաթևին վրայ: Զանազանելու համար ստորին մատուռը վերնագոյն մատուռէն կամ Վերնատունէն, կը կոչէին զայն Գալիլիա, անուն մը զոր կը բացատրէր անդաստակին վրայ դրուած հետեւալ արձանագրութիւնը.

«Յարուցեալ Քրիստոս կ'երևայ հոս Գալիլիացի աշակերտներուն, այս պատճառաւ այս տեղը կոչուած է Գալիլիա» (P. P. V. A. էջ 491):

Միեւնոյն եկեղեցիին մէջ, հողին հաւասարութեամբ, հարաւային կողմը կը տեսնուէր ուրիշ ստորին սենեակ մը, ուր Քրիստոս երեցաւ իր աշակերտներուն «զրօքն փակելովք»: Հոն կը գտնուի նաեւ հրեշտակի մը միջոցաւ Սինայէն բերուած նուիրական քար մը: Այս միեւնոյն եկեղեցիին միւս կողմը, դէպի արեւմուտք, նաև ցած կողմը կար ուրիշ սենեակ մը. հոն էր որ Ս. Կոյսը իր հողին աւանդեց և ամէն ինչ տեղի ունեցաւ Ասուածարբան Յովհաննէս Աւեսարսանի սան մէջ: Հոն էր Կայիափայի տունը ուր Պետրոս երեք անգամ Քրիստոսը ուրացաւ, հաւը խօսելէ առաջ: Այս տեղը կը գտնուի Սիոնի արեւելքը (Դանիէզ յիսուսիան ուղեգիր):

1545 ին քրիստոնեաները վտարուեցան այս եկեղեցիէն որ մզկիթի վերածուեցաւ և մինչև հիմակ ալ նոյնպէս կը մնայ: